


### ԱՂՕԹՔԻ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խոստովանութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ բարիք եւ պարգեւ, նաեւ հոգիի կենդանութիւն եւ բժշկութիւն է: Շատեր տգիտութեան հետեւանքով յիմարաբար կորսուած են մեղքերու մէջ եւ զրկած են իրենց անձերը խոստովանութեան շնորհքէն: Բազմաթիւ են անոնք, որոնք առանց խոստովանութեան ու հաղորդութեան կը մնան: Ոմանք՝ որովհետեւ չեն գիտեր խոստովանութեան շնորհքն ու բարիքը: Ուրիշներ՝ ամչնալուն եւ վախնալուն համար չեն խոստովանիր: Իսկ ուրիշներ՝ որովհետեւ ընկղմած ու կորսուած են մեղքերու մէջ, չեն ուզեր ազատիլ սատանայի ծառայութենէն:

Արդ, մի՛ անգիտանաք: Խոստովանութիւնը բժշկութիւն է հոգիներու համար, փախուստ է դժոխքէն, ազատութիւն է սատանայէն եւ յարութիւն է մահէն: Հետեւաբար, կը պատուիրենք, որ ամէն Կիրակի եկեղեցւոյ դուռը բերթաք եւ խոստովանիք: Քահանային ներկայութեան ձեր ունեցած փոքր վախով ու ամօթով կը փրկուիք այն մեծ ամօթէն, որ տիեզերական ասեղ հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ, այն մեծ Կիրակին որ անփոխարինելի է՝ երբ մարդոց բոլոր ծածուկ ու գաղտնի գործերը պիտի յայտնուին:

### ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎԻՂԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՎՏԱՏՈՒՄ

#### 2.- Պատրաստութիւն ընծաներուն


Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Ապա շարունակելով իր հոգեյոյգ աղօթքը՝ կը խնդրէ երկնաւոր Հօրմէն, որպէսզի Ան ողորմութիւն շնորհէ հաւատացեալներուն, որոնք խոնարհելով մեծ Խորհուրդին դիմաց կ'երկրպագեն յաւիտեանական Աստուածութեան:

Պատարագիչ քահանան ինք եւս կը խոնարհի՝ փառք եւ պատիւ ընծայելով Սուրբ Երրորդութեան, ապա բարձրաձայն կ'ըսէ.-

«Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ միջոցաւ, որուն հետ քեզի՝ Սուրբ Հոգիիդ եւ Ամենակալ Հօրը կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամեն»:...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՔԻ ԽՍ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024

ԹԻԻ 52

### ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 41.4-14: Եբր. 7.11-25: Ղկ. 19.11-28

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ

#### ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 19. 11-28

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով, որ ժողովուրդը կը կարծէ՝ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց. «Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնիլը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. «Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձա՛մ»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Չենք ուզեր, որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»: Երբ որ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզի տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզի ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ՝ որ քուկոյ չէ եւ կը հնձես ինչ՝ որ չես սերմանած»: Տէրը անոր ըսաւ. «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր, որ կ'առնեմ ինչ՝ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ՝ որ չեմ սերմանած, ինչո՞ւ ուրեմն դրամս սեղանաւորներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ, թէ վերադարձիս զայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէք տուէք անոր՝ որ տասնապատիկը շահած է»:

Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը շահած է: Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք, ըսաւ ան, ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր՝ որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէք զանոնք»:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑ ՈՐԴԻՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ՝  
ՅԱԿՈՐԱՅ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԵՒ  
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՉՉԻՆ**

### Յակոբոս Առաքեալ

Չեբեղիոսի եւ Սողոմէի որդին՝ Յակոբոս, իր եղբօրը Յովհաննէսի եւ Պետրոսի հետ կը կազմէին այն սեղմ շրջանակը, որուն աւելիով կը վստահէր Քրիստոս:

Յակոբոս եւ Յովհաննէս իրենց ընթրստ նկարագրին համար Քրիստոսի կողմէ կոչուեցան «Որդիք Որոտման»:

Յակոբոս առաքեալի նահատակութեան կ'անդրադառնայ միայն Գործք Առաքելոց գիրքը, երբ կը պատմէ, թէ Հերովդէս ձերբակալելով կը զլիսատ գայն՝ շուրջ 99 թուականին Երուսաղէմի մէջ:

Յակոբոս կը հանդիսանայ առաջին նահատակը առաքեալներու խումբին: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ իր մարմինը կը նետուի Եաֆայի ծովը եւ ալիքները գայն կը հանեն Սպանիոյ ծովեզերքը, ուր մեծ ժողովրդականութիւն կ'ունենայ: Իսկ անոր գլուխը կը տարուի Յակոբոս Տեառնեղբայր առաքեալին, որ կը թաղ գայն իր պարտէզին մէջ, որու վրայ ապագային կը կառուցուի Երուսաղէմի հայոց Ս. Յակոբեանց հիանալի եկեղեցին:

### Յովհաննէս Առաքեալ

Առաքեալներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ ճանչցուած է «Սիրելի Աշակերտ» անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի երամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ, եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախնալով կը քեն գժրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի խնամքին եւ այդպիսով կ'աւանդէ Իր հոգին:

Յովհաննէս առաքեալ, նաեւ ծանօթ է իր անունը կրող սքանչելի ակետարանով՝ «Աւետարան Ըստ Յովհաննէսի»: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա արքայապետը կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են «Յայտնութիւն Յովհաննէսի» գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրիլ ճշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ 100 թուականին Քրիստոսի:

### ԱՌԱՎՆԵՐ

Որդեա՛կ, եթէ իմ պատուիրաններս հոգւոյդ մէջ պահես եւ գործադրես զանոնք՝ ունկնդիր պիտի դառնաս իմաստութեան, սիրտդ գիտութեամբ պիտի հարստացնես եւ զանոնք որպէս խրատ՝ աւանդես զաւկիդ:

Գլուխ Բ. 1-2

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

### ԵՐԲ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅ Է՝ ԶԻՆՇԱՆԱԿԵՐ, ՈՐ ԿՍՏՈՒՄԸ ԲԱՅԱԿԱՅ Է

Փորձութեան ներկայութիւնը Աստուծոյ բացակայութեան հետեւանքը չէ, ընդհակառակը, անհկա կրնայ Աստուծոյ ներկայութեան հետեւանքը ըլլալ: Բայց հարկաւ այս չի նշանակեր, թէ Աստուծոյ ներկայութիւնը փորձութիւն կը բերէ: Աստուծոյ ներկայութիւնը փորձութիւն չէ որ կը բերէ, այլ՝ փորձութիւնը խաղաղութեամբ տանելու կարողութիւնն է, որ կը բերէ: Աստուած ներկայ էր Յովսէփի կեանքին մէջ, հակառակ ասոր, փորձութիւնները անպակաս էին անոր կեանքէն: Յետեւաբար, երբ կը հանդիպիս ներկայութեան՝ մի՛ աճապարեր ըսելու, թէ Աստուած բացակայ է կեանքէդ:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍԸ

Սիրելի ընթերցող, երբ կը տեսնես մէկը հիւանդ, փորձութեան մէջ, դժուարութեան մէջ, կը տառապի ու կը տագնապի՝ բնաւ մի մտածեր կամ մի ըսեր, թէ անհկա Աստուծմէ հեռու մէկն է՝ անոր համար է, որ այդպիսի բաներ կը պատահին իրեն: Պատմութեան բոլոր սուրբերն ալ չարչարուած են, ատիկա կը նշանակէ՞ որ Աստուած հեռու էր անոնցմէ կամ իրենք՝ Աստուծմէ:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

### ՍԱՂՄՈՍ 76

Հրէաստանի մէջ ամէն մարդ կը ֆանջնայ զԱստուած, անոր հոչակը մեծ է իր ժողովորդին մէջ: Սաղմիւն մէջ է անոր բնակարանը, Սիոնին մէջ է անոր բնակավայրը: Հոն էր, որ ան խորտակեց թշնամիներուն բոցավառ նետերը, անոնց վահաններն ու սուրբքը, եւ պատերազմի բոլոր զէնքերը:

Լուսափայլ ես, Տէ՛ր, եւ սփանջելի՛ մի՛նչ աւարով կը դառնաս լեռներէն, ուր ֆաշամարտիկ թշնամիները զինաթափեցիր, ուր բոլոր պատերազմիկները մահուան բունովը ֆնացան, իրենց ամբողջ զօրութիւնը կորսնցուցին: Սպառնալիքդ բաւեց, ո՛վ Աստուածը մեր հայրերուն, որ անշարժութեան մատնուին ձի ու ձիաւոր: Ահաւոր ես դուն, երբ բարկացած ես՝ ո՞վ դիմացդ կրնայ կանգնիլ: Ե՛րկինքէն լսելի դարձուցիր դատաստանդ, եւ երկիրը վախցաւ ու լոնց, երբ որ ելար դատաստան ընելու, ո՛վ Աստուած, փրկելու համար երկրի բոլոր տառապեալները: Մարդոց ընդիմութիւնը գոհաբանութեան՝ պիտի փոխուի, ֆեզի դէմ պայքարողները ֆե՛զ պիտի օրհնաբանեն:

Մարդոց ընդիմութիւնը գոհաբանութեան պիտի փոխուի, ֆեզի դէմ պայքարողները ֆե՛զ պիտի օրհնաբանեն:

### ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

ՍԱՂՄՈՍԱԳԻՐԲԸ ԿԱՐԴԱԼՈՎ